Միջազգային տնտեսական սանկցիաների կոնվենցիոն հիմքերը ժամանակակից միջազգային իրավունքում

Բելլույան Ֆիլիանա Ռ.
ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության ավագ դատախազ,
իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
Երևանի պետական համալսարան (Երևան, ՀՀ)
https://orcid.org/0000-0003-0193-1184
fbelluyan@gmail.com

ՀՏԴ՝ 341; **EDN:** GDTJLG
DOI: 10.58587/18292437-2026.5-82
Հանգուցաբառեր և բառակապակցություններ. միջազգային տնտեսական սանկցիաներ, միջազգային իրավունք, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ, միակողմանի սանկցիաներ, մարդու իրավունքներ, համաչափության սկզբունք, ազգային անվտանգություն, Սակագների և առևտրի ընդհանուր համաձայնագիր, Եվրոպական միության պայմանագրեր, միջազգային մարդասիրական իրավունք

Конвенционные основы международных экономических санкций в современном международном праве

Беллуян Филиана Р.
Старший прокурор Управления по защите государственных интересов Генеральной прокуратуры Республики Армения,
Аспирант кафедры европейского и международного права, Юридический факультет, Ереванский государственный университет (Ереван, РА)

Аннотация. Представленная статья посвящена системному анализу конвенциональных основ международных экономических санкций в современном международном праве. Автор рассматривает роль экономических санкций как неотъемлемого инструмента политического давления и международных отношений, исключающего военное вмешательство. Основное внимание уделяется статье 41 Устава ООН, которая легитимизирует принимаемые Советом Безопасности невоенные ограничительные меры.
В статье рассматриваются альтернативные и дополнительные конвенциональные основания применения экономических санкций, в том числе международные договоры о нераспространении оружия, пакты о защите прав человека, нормы международного гуманитарного права (Женевские конвенции), а также исключения по соображениям национальной безопасности, установленные статьей 21 Генерального соглашения по тарифам и торговле (GATT). Особое внимание уделяется существующим теоретическим дебатам вокруг правомерности многосторонних и односторонних экономических санкций, в частности их возможному противоречию с принципами суверенитета государств, невмешательства и защиты основных прав человека.
В заключение предлагается создать новые правовые механизмы и институциональные органы мониторинга для обеспечения соразмерности, гуманитарного воздействия и правовой предсказуемости санкций.
Ключевые слова и словосочетания: международные экономические санкции, международное право, Совет Безопасности ООН, односторонние санкции, права человека, принцип соразмерности, национальная безопасность, Генеральное соглашение по тарифам и торговле (ГАТТ), договоры Европейского союза, международное гуманитарное право

Conventional Foundations of International Economic Sanctions in Modern International Law

Belluyan Filiana R.
Senior Prosecutor at the Department for the Protection of State Interests of the Prosecutor General's Office of the Republic of Armenia,
Postgraduate Student at the Chair of European and International Law, Faculty of Law, Yerevan State University (Yerevan, RA)

Abstract. The presented article is dedicated to a systematic analysis of the conventional foundations of international economic sanctions in modern international law. The author examines the role of economic sanctions as an integral instrument of political pressure and international relations, while excluding military intervention. The primary focus is placed on Article 41 of the UN Charter, which legitimizes non-military restrictive measures enacted by the Security Council.

The article discusses alternative and complementary conventional grounds for applying economic sanctions, including international non-proliferation treaties, human rights covenants, norms of international humanitarian law (Geneva Conventions), as well as national security exceptions established under Article 21 of the General Agreement on Tariffs and Trade (GATT). Special attention is given to existing theoretical debates regarding the legality of multilateral and unilateral economic sanctions, particularly their potential contradiction with the principles of state sovereignty, non-interference, and the protection of fundamental human rights.

In conclusion, it is proposed to establish new legal mechanisms and institutional monitoring bodies to ensure proportionality, humanitarian impact, and legal predictability of sanctions.

Keywords and phrases: international economic sanctions, international law, UN Security Council, unilateral sanctions, human rights, principle of proportionality, national security, General Agreement of Tariffs and Trade (GATT), Treaties of the European Union, international humanitarian law

Ժամանակակից միջազգային իրավունքում տնտեսական սանկցիաները դարձել են միջազգային հարաբերությունների գործիքակազմի անբաժանելի մասը և հաճախ օգտագործվում են որպես քաղաքական ճնշման միջոց՝ բացառելով ռազմական միջամտությունը:

Այս երևույթի իրավական հիմքերի քննությունը պահանջում է անդրադառնալ կոնվենցիոն իրավունքի կառուցվածքին, քանի որ հենց միջազգային պայմանագրերն են միջազգային իրավունքի հիմնական աղբյուրներից մեկը, ինչն ամրագրված է ՄԱԿ-ի կանոնադրության 38(1) հոդվածում:

Տնտեսական սանկցիաները՝ որպես իրավական և քաղաքական երևույթ, իրենց լեգիտիմությունը հաճախ կառուցում են ՄԱԿ-ի կանոնադրության 41-րդ հոդվածի հիման վրա, որը թույլ է տալիս Անվտանգության խորհրդին ձեռնարկել ոչ ռազմական միջոցներ՝ սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի ակտի դեպքում: Նշված հոդվածը հիմք է հանդիսացել այնպիսի լայնածավալ սանկցիաների համար, ինչպիսիք էին Իրաքի դեմ սահմանված տնտեսական միջոցառումները 1990-ականներին: Այդ միջոցառումները ներառում էին համապարփակ էմբարգո, այդ թվում՝ ապրանքների, ֆինանսների, ավիացիոն հաղորդակցության և նավթի վաճառքի արգելքը: Միաժամանակ Իրաքի օրինակը առաջացրեց լայն քննարկում միջազգային իրավունքի շրջանակում՝ կապված սանկցիաների մարդասիրական ազդեցության և համարժեքության սկզբունքի խախտման հետ: ՄԱԿ-ի կողմից նշանակված հումանիտար զեկուցողները բացահայտ կերպով քննադատեցին սանկցիաները՝ ընդգծելով, որ դրանք հանգեցրել են քաղաքացիների մահվան և սոցիալ-տնտեսական համակարգի փլուզման:

Բացի ՄԱԿ-ի կանոնադրական հիմքերից՝ տարածաշրջանային կազմակերպություններն ունեն իրենց սեփական պայմանագրային հենքը՝ տնտեսական սանկցիաներ կիրառելու համար:

Տնտեսական սանկցիաները՝ որպես միջազգային իրավական պատասխան միջոց, լեգիտիմացվում են ոչ միայն ՄԱԿ-ի կանոնադրությամբ, այլև մի շարք այլ կոնվենցիոն փաստաթղթերով և միջազգային պայմանագրերով: ՄԱԿ-ի կանոնադրությունը միջազգային տնտեսական սանկցիաների կիրառման հիմնական հիմքն է: Եվ չնայած ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ գլխի 41-րդ հոդվածը կենտրոնական դեր ունի սահմանափակող միջոցների իրավաչափության գնահատման հարցում, ժամանակակից միջազգային իրավունքը նաև այլ աղբյուրներով է ամրագրում դրանց կիրառման օրինականությունը և սահմանափակումները:

Որոշակի ոլորտներում կիրառվող սանկցիաները հաճախ հիմնվում են միջազգային կոնվենցիաների խախտումների վրա: Օրինակ՝ Միջուկային զենքի չտարածման պայմանագրի (NPT), Քիմիական զենքի մասին կոնվենցիայի (CWC) կամ Կենսաբանական զենքի մասին կոնվենցիայի խախտումը կարող է հիմք հանդիսանալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կամ առանձին պետությունների կողմից տնտեսական սանկցիաների կիրառման համար: Նշված պայմանագրերը կազմված են՝ հիմքում ունենալով այն կանխավարկածը, որ պետությունները պետք է հրաժարվեն նման զենքերի արտադրության, դրանց զարգացման և տարածման հետ կապված բոլոր գործողություններից: Թեև նշված պայմանագրերը սովորաբար նախատեսում են միջազգային կազմակերպությունների վերահսկողական մեխանիզմներ, մասնավորապես՝ Միջուկային զենքի չտարածման պայմանագրի դեպքում դա Միջազգային ատոմային էներգիայի գործակալությունն է, սակայն երբ պետությունը խախտում է պայմանագրի դրույթները, օրինակ՝ գաղտնի իրականացնում է միջուկային ծրագիր, պայմանագիրը սահմանափակ կարողություններ ունի պատժամիջոցներ կիրառելու գործում: Այդ հարցում հիմնական դեր է ստանձնում ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը: Իրանի և Հյուսիսային Կորեայի նկատմամբ կիրառված սանկցիաները քննարկվող գործողությունների փաստացի կատարման արդյունքում են կիրառվել [**15**, էջեր 1-7]:

Որպես կոնվենցիոն հիմք կարելի է առանձնացնել նաև մարդու իրավունքների մասին միջազգային պայմանագրերը:

Թեև մարդու իրավունքների միջազգային պայմանագրերը, մասնավորապես՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների

մասին միջազգային դաշնագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը· Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիան ուղղակիորեն սանկցիաների մասին չեն խոսում, սակայն հաճախ իրավական հիմք են դառնում՝ մարդու իրավունքների խախտումներին հակազդելու նպատակով: ԵՄ-ը, ԱՄՆ-ը և այլ պետություններ հաճախ հիմնավորում են իրենց կողմից կիրառվող սահմանափակող միջոցները մարդու իրավունքների խախտումների հիմքով [**12**, էջեր 239-245]: Այս փաստաթղթերը երաշխավորում են այնպիսի հիմնարար իրավունքներ, ինչպիսիք են կյանքի իրավունքից օգտվելը, առողջապահության հասանելիությունը, սննդի և դեղորայքի ձեռքբերման իրավունքը: Երբ սանկցիաներն իրենք են հանգեցնում այդ իրավունքների խախտմանը, առաջանում է իրավական հակասություն՝ միջազգային իրավունքի երկու ճյուղերի՝ անվտանգության ապահովման և մարդու իրավունքների պաշտպանության միջև: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Al-Dulimi and Montana Management Inc. v. Switzerland գործով 2016 թվականի հունիսի 21-ի որոշումը [**27**] անդրադարձավ այդ բախմանը, և դատարանը ճանաչեց, որ մարդու իրավունքները պետք է պահպանվեն նույնիսկ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումների իրականացման ընթացքում:

Ավելին՝ իրավական ակադեմիական գրականության մեջ ներկայումս գերակշռում են այն մոտեցումները, որոնք կոչ են անում վերանայել սանկցիաների կիրառման միջազգային պայմանագրային համակարգը՝ առավել թափանցիկ, հաշվետու և իրավաբանորեն կանխատեսելի մեխանիզմներով: Միջազգային իրավաբանները, այդ թվում՝ Թ. Ռույսը [**19**, էջեր 20-22, 37-41] և Մ. Հափոլդը [**16**, էջ 88], վերլուծում են սանկցիաների իրավաչափության չափանիշները՝ առաջարկելով պայմանագրային հիմքում ներառել հումանիտար ազդեցության վերլուծությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը՝ որպես առանձին չափանիշներ: Նրանք նաև քննադատում են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մենաշնորհը տնտեսական սանկցիաների ոլորտում՝ ընդգծելով քաղաքական շահերի գերակայությունը իրավական սկզբունքների նկատմամբ:

Մարդու իրավունքների հետ կապված կարելի է առանձնացնել նաև միջազգային մարդասիրական իրավունքի պայմանագրերը որպես առանձին կոնվենցիոն հիմք:

Միջազգային մարդասիրական իրավունքի աղբյուրները, մասնավորապես՝ 1949 թվականի օգոստոսի 12-ին ընդունված՝ «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին», «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին», «Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին», «Ծովում զինված ուժերի կազմից վիրավորների, հիվանդների և նավաբեկյալների վիճակի բարելավման մասին» ժնևյան կոնվենցիաները, սահմանում են սանկցիաների կիրառման սահմանափակումները, երբ դրանք առաջացնում են քաղաքացիական բնակչության զանգվածային տառապանք: Հատկապես ընդգծվում է համաչափության, քաղաքացիական պաշտպանության, և կոլեկտիվ պատժի արգելքի սկզբունքները [**21**]: Ժնևի 1949 թ. կոնվենցիաներին կից՝ միջազգային զինված հակամարտությունների զոհերի պաշտպանության մասին 1977 թ. հունիսի 08-ի առաջին լրացուցիչ արձանագրության 51-րդ և 54-րդ հոդվածներն արգելում են բնակչությանը զանգվածային սովամահության ենթարկելը, ինչպես նաև քաղաքացիական օբյեկտները ոչնչացնելը, եթե այդ գործողությունների նպատակը չի հիմնավորվում անմիջական ռազմական անհրաժեշտությամբ:

Որպես հաջորդ կոնվենցիոն հիմք կարելի է առանձնացնել Սակագների և առևտրի ընդհանուր համաձայնագիրը:

Թեև Առևտրի համաշխարհային կազմակերպության (WTO) կանոնակարգերը սահմանում են ազատ առևտրի սկզբունքներ, սակայն Սակագների և առևտրի ընդհանուր համաձայնագրի (GATT) 21-րդ հոդվածը նախատեսում է բացառություն, որը վերաբերում է այն դեպքերին, երբ պետությունը կիրառում է միջոցներ ազգային անվտանգության պաշտպանության նպատակով: Ընդ որում՝ այդ հոդվածը անդամ պետությանը լիակատար ազատություն չի տալիս, այսինքն՝ ցանկացած իրավիճակ չի կարելի դիտարկել որպես միջազգային հարաբերություններում արտակարգ իրավիճակ. այդպիսի իրավիճակի գոյությունը պետք է հիմնավորվի: 21-րդ հոդվածի կիրառումը պահանջում է գնահատել և հասկանալ՝ արդյոք գոյություն ունի անմիջական կապ կիրառվող միջոցների և անդամ պետության անվտանգության շահերի պաշտպանության միջև [**26**, էջեր 55-73]: Գործնականում այս դրույթն այսօր իրավական հակասական մեկնաբանությունների աղբյուր է դարձել, քանի որ որոշ պետություններ այն երբեմն օգտագործում են միակողմանի տնտեսական սանկցիաները արդարացնելու համար՝ առանց Անվտանգության խորհրդի համաձայնության: Օրինակ՝ ԱՄՆ-ը հայտարարեց, որ պողպատը ու ալյումինը խիստ կարևոր է համարում իր ազգային անվտանգության համար, մասնավորապես՝ նշեց, որ եթե իրենք թույլ տան պողպատի ու ալյումինի էժան ներմուծումը, ապա ամերիկյան տեղական պողպատաձուլական գործարանները կփակվեն, որի ար-

դյունքում զենք, օդանավ, տեխնիկա արտադրելու հնարավորություն չի լինի, ինչն էլ իր հերթին վնաս կհասցնի պետության ազգային անվտանգությանը: Նշված պատճառաբանությամբ պողպատի ու ալյումինի ներմուծման համար մաքսատուրքերն ավելացրեց: Ռուսաստանի Դաշնությունը դժգոհություններ արտահայտեց նշված գործողությունների հետ կապված՝ նշելով, որ ԱՄՆ-ը ոչ թե իր ազգային անվտանգությունն է պաշտպանում, այլ ռուսական ապրանքն արգելափակելով՝ փորձում է այնպես անել, որ սեփական արդյունաբերությունը շահի, և այն իրականում միակողմանի տնտեսական սահմանափակում է: Նույն խնդիրը առաջացավ Կանադայի, ԵՄ-ի, Նորվեգիայի ապրանքների ներմուծման հետ: Ավելին՝ Ռուսաստանի Դաշնությունը բողոք ներկայացրեց, որի արդյունքում ԱՀԿ վեճերի կարգավորման մարմինը 2022 թվականի դեկտեմբերի 09-ին հրապարակեց իր զեկույցը՝ արձանագրելով, որ ԱՄՆ-ի հիմնավորումները չեն համապատասխանում ազատ առևտրի սկզբունքներին [**22**], սակայն միևնույնն է, ԱՄՆ-ն չընդունեց այդ որոշումը՝ հայտարարելով, որ չի գործելու այդ որոշմանը համապատասխան:

Որպես հաջորդ կոնվենցիոն հիմք կարող ենք նշել Եվրոպական միության պայմանագրերը:

ԵՄ-ի ներսում տնտեսական սանկցիաների կիրառումը իրավաչափ է՝ ըստ «Եվրոպական միության մասին» պայմանագրի, ինչպես նաև «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի (TFEU)-ի[1] [**3**; **4**] 215-րդ հոդվածի, որը թույլ է տալիս Եվրոպական միության խորհրդին ընդունել սահմանափակող միջոցառումներ: Սրանք կարող են կիրառվել երրորդ երկրների, կազմակերպությունների կամ անհատների նկատմամբ՝ որպես արտաքին քաղաքականության գործիք, սակայն միջազգային իրավունքի հարգման սահմաններում:

Եվրոպական միությունն իր «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի 215-րդ հոդվածով հիմք է ստեղծում տնտեսական սահմանափակող միջոցառումների համար: Այդ հիմքով ԵՄ-ն կիրառել է բազմաթիվ սանկցիաներ Ռուսաստանի Դաշնության դեմ՝ Ղրիմի անեքսիայից հետո: Այս սանկցիաները ներառել են ֆինանսական սահմանափակումներ, էներգետիկ ոլորտի արգելքներ, ինչպես նաև անհատների և կազմակերպությունների ցուցակագրման միջոցով շարժման և ակտիվների սառեցում:

Ի տարբերություն պայմանագրային հիմունքներով կիրառվող բազմակողմ սանկցիաների՝ միակողմանի տնտեսական սանկցիաները առավել բարդ և մեծաքանակ խնդիրներ են առաջացնում միջազգային իրավունքի տեսանկյունից:

2021 թ. մայիսի 14-ին Ժնևում Եվրամիության հատուկ զեկուցողի նախագահությամբ տեղի է ունեցել փորձագետների խորհրդակցություն՝ միջազգային իրավունքում միակողմանի տնտեսական սանկցիաների և դրանց հետևանքների վերաբերյալ [**23**], որի ընթացքում միակողմանի տնտեսական սանկցիաների, դրանց իրավաչափությանը գնահատական տալու վերաբերյալ արժեքավոր հայտարարություններ են արվել փորձագետների կողմից:

Խորհրդակցության ժամանակ փորձագետ Ռույեն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի սանկցիաները դիտարկել է որպես «միջազգային սանկցիաներ» և դրանք տարբերակել է այլ սանկցիաներից՝ վերջիններս կոչելով «միակողմանի սանկցիաներ»: Նա նշել է, որ խնդիրները կարող են ծագել այն պետությունների «թեթև» վերաբերմունքից, որոնք կիրառում են սանկցիաներ՝ հնարավորություն տալով դրանց տարածմանը, և որ սանկցիաների կիրառման հետևանքով առաջացող մարդու իրավունքներին առնչվող խնդիրները նույնական են՝ անկախ այն բանից՝ միջազգային, թե միակողմանի սանկցիաների կիրառման հետևանքով են առաջանում: Նա նշել է նաև, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից սանկցիաների՝ առավել շատ դեպքերով կիրառման հնարավորությունն առավել քիչ է, քան միակողմանի տնտեսական սանկցիաների պարագայում: Դա պայմանավորված է նրանով, որ միջազգային կազմակերպություններում պետությունների որոշակի քանակը պետք է պարտադիր հավանություն տա սանկցիաների կիրառմանը:

Ընդհանրացնելով իր հիմնական շեշտադրումները՝ պրոֆեսոր Ռույեն նշել է, որ հարկադրանքի միջոցները և սանկցիաները, այդ թվում՝ միակողմանի, կարող են ծառայել օրինական նպատակների իրագործմանը և լինել համաչափ: Եթե վերլուծությունը կենտրոնացնենք ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող միակողմանի տնտեսական սանկցիաների վրա՝ վերջիններիս ակտիվները սառեցնելու եղանակով, ապա սանկցիաներն իրենց էությամբ գործնական հետևանքներ ունեն՝ զրկելով մարդուն իր սեփականությունից և գործառութային առումով համարժեք են քրեական դատավարությունում կիրառվող անվտանգության միջոցներին: Դրա հետ մեկտեղ պետք է հաշվի առնել ընթացակարգային երաշխիքները, ինչպես նաև համաչափության սկզբունքը:

Փորձագետ Գլանդինի կարծիքով՝ միջազգային իրավունքում միակողմանի սանկցիաները

[1] Եվրոպական համայնքի վերակազմավորումը տեղի է ունեցել 2007 թվականի դեկտեմբերի 13-ին Լիսաբոն քաղաքում ստորագրված պայմանագրով, որն ուժի մեջ է մտել 2009 թվականի հունվարի 01-ին: Եվրոպական միությունը Եվրոպական համայնքի իրավահաջորդն է դարձել:

հակաօրինական ճանաչելու կամ այսպիսի գնահատական տալու համար հիմքեր առկա չեն: ՄԱԿ-ի կանոնադրությամբ անդամ պետություններին իրենց պատժիչ միջոցներ կիրառումն արգելող նորմեր կամ սկզբունքներ բացակայում են: Ավելին՝ որևէ միջազգային սովորույթ, պայմանագիր կամ սկզբունք չկա, որը կարգելի անդամ պետություններին կիրառելու խաղաղ հարկադրանքի միջոցներ կամ սանկցիաներ: Միջազգային դատարանը «Նիկարագուան ընդդեմ ԱՄՆ» գործով 1986 թ. հունիսի 27-ի որոշմամբ հաստատել է, որ տնտեսական հարկադրանքը չի հակասում միջազգային իրավունքին: Առևտրային էմբարգոն և սահմանափակող միջոցները Միջազգային դատարանի կողմից չճանաչվեցին հակաօրինական, ընդ որում՝ դատարանը շեշտադրեց, որ կարևոր է՝ դրանք չուղեկցվեն ուժի կամ դրա կիրառման սպառնալիքով, դրանց կիրառմամբ պետության քաղաքական կամ տարածքային ամբողջականության խախտմամբ և ՄԱԿ-ի նպատակներին հակասող այլ եղանակներով:

Խորհրդակցության ընթացքում ելույթով հանդես եկավ նաև փորձագետ Կազազին, ով հայտարարեց, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից լիազորված սանկցիաների ոլորտում պետք է գործի օրինականության կանխավարկածը, սակայն դրա հետ միասին պետք է գոյություն ունենա դրանց օրինականությունը և կիրառման հիմքում ընկած փաստերի իրական լինելը վիճարկելու հնարավորությունը: Նրա կարծիքով՝ բոլոր մնացած սանկցիաները (միակողմանի և երկրորդային) ընդհանուր առմամբ հակասում են միջազգային իրավունքին մի քանի պատճառներով, այդ թվում՝ արտատարածքային իրավասության մասով, խախտում են պետության գործերին չմիջամտելու և ինքնիշխանության սկզբունքները: Այդ իսկ պատճառով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից չերաշխավորված ցանկացած սանկցիայի կիրառման հարաբերություններում պետք է գործի դրանց անօրինական լինելու կանխավարկածը՝ օրինական լինելու ապացուցման բեռը դնելով սանկցիա կիրառած պետության վրա և անօրինական սանկցիայի կիրառման հետևանքով պատճառված վնասի հատուցման պարտավորությունը դնելով վերջինիս վրա:

Մեր կարծիքով միակողմանի տնտեսական սանկցիաների ապօրինի լինելու վերաբերյալ տեսակետն ավելի հիմնավոր է (հիմնավորումները՝ ստորև), սակայն դրանց կիրառման պարագայում ցանկացած միակողմանի միջոց պետք է միջազգային իրավունքի սկզբունքներին, այդ թվում՝ ուժի կիրառման արգելքի, պետության ներքին գործերին չմիջամտելու, խտրականության արգելքի, ինքնիշխան հավասարության, մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներին համապատասխան լինի, և պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ սանկցիայի թիրախ դարձած պետությանը հարկադրելու դադարեցնել որևէ ապօրինի արարք: Միևնույն ժամանակ միակողմանի միջոցների կիրառումը չպետք է լինի ուժի կիրառման այլընտրանք: Ցանկացած միակողմանի միջոց պետք է ժամանակավոր բնույթ ունենա: Սանկցիաները պետք է ունենան կիրառման ավարտի հստակ ամսաթիվ, կիրառման հստակ չափանիշներ և սանկցիաները չեղարկելու հստակ կառուցակարգեր, ընդ որում՝ չեղարկելուց հետո դրանց կրկին կիրառումը պետք է հիմնավորված լինի: Միակողմանի սանկցիաների կիրառման պարզությունը չպետք է արդարացնի դրանց կիրառումը: Օրինակ՝ պետությունները չպետք է սանկցիաների կիրառումը պատճառաբանեն այն փաստարկով, որ ցանկացած պետություն ինքն է որոշում իր տնտեսական քաղաքականությունը, տնտեսական հարաբարերությունների ուղղությունները, գործընկերներին և այլն: Բացի այդ, որևէ սանկցիա չպետք է դատական բողոքարկումներից դուրս մնա: Պետք է անկախ և անաչառ ատյանին բողոքարկելու հնարավորություն լինի ցանկացած պարագայում:

Տեսության մեջ միակողմանի տնտեսական սանկցիաների վերաբերյալ կա երկու տեսակետ. առաջին տեսակետի համաձայն՝ միակողմանի տնտեսական սանկցիաները համապատասխանում են միջազգային իրավունքին և պետություններին բնորոշ տնտեսական ազատության մաս են կազմում: Եթե առավել որոշակի ասենք, ապա ըստ այդ տեսակետի՝ ո'չ պայմանագրերում, ո'չ սովորութային կարգավորումներում պետությունների համար չկա իրենց տնտեսական հարաբերությունները ազատորեն փոխելու ուղղակի արգելք, այդ թվում՝ մեկ այլ պետության կամ սուբյեկտի դեմ տնտեսական սանկցիա կիրառելով: Իհարկե, այդ ազատությունը չի կարող այնքան լայն լինել, որ հնարավորություն տա պետություններին խախտելու իրենց ստանձնած միջազգային պարտավորությունները:

Այդ դիրքորոշումն ուներ Միջազգային դատարանը «Նիկարագուան ընդդեմ ԱՄՆ» գործով: Նշված գործով Միջազգային դատարանի կողմից 1986 թ. հունիսի 27-ին կայացված որոշման մի մասը վերաբերում էր ԱՄՆ կողմից Նիկարագուայի դեմ կիրառված տնտեսական սահմանափակումներին, մասնավորապես՝ որոշման մեջ նշվել էր, որ պետությունը (ԱՄՆ-ն) պարտավոր չէ շարունակել առևտրային հարաբերությունները, եթե անհրաժեշտ չի գտնում պայմանագրային պարտավորության կամ այլ իրավական պարտավորության բացակայության պայմաններում: Չնայած դատարանը եկավ այն եզրահանգմանը, որ ԱՄՆ-ի կողմից Նիկարագուայի դեմ ուղղված որոշ միջոցները,

օրինակ՝ օգնության տրամադրման դադարեցումը, միջազգային իրավունքին չէին հակասում, սակայն այդ եզրահանգումը սահմանափակվեց այդ գործի շրջանակում, ԱՄՆ կոնկրետ գործողություններով և նշվեց, որ այն չպետք է դիտարկվի որպես ընդհանուր կանոն [**20**, էջ 100]:

Տնտեսական սանկցիաների օրինական լինելու տեսակետի կողմնակիցները հաճախ հավաստիացնում են, որ ընդհանուր իրավունքում չկա որևէ պետության հետ տնտեսական հարաբերություններ պահպանելու պարտադրանք [**14**, էջ 289]: Դա վերաբերում է նաև տնտեսական սահմանափակումների և հարկադրանքի միջոցներին, ընդ որում՝ եթե այդ միջոցները չեն հակասում պայմանագրային կամ այլ նորմերին, ապա համարվում են օրինական: Նշվում է նաև, որ առանձին երկրների կողմից տնտեսական սանկցիաների կիրառումը արտաքին քաղաքականության գործիքներից է [**16**, էջ 3]: Սակայն հաշվի առնելով, որ պետությունները, հիմնվելով պետական ինքնիշխանության վրա, դիմադրություն են ցույց տվել միակողմանի սանկցիաների որոշ էքստերիտորիալ միջոցների նկատմամբ (օրինակ՝ երրորդ պետությունների կազմակերպությունների նկատմամբ սահմանափակումներ կիրառելը), մեծ մասամբ համաձայն են, որ միջազգային իրավունքը միակողմանի էքստերիտորիալ միջոցների վրա սահմանափակումներ է կիրառում [**18**, էջ 14]:

Սանկցիաների օրինական լինելու հակառակ տեսակետի վերաբերյալ միջազգային իրավունքի ոլորտում հրապարակվել են բազմաթիվ աշխատանքներ, որոնք ապացուցում են դրանց ապօրինի լինելը: Այդ տեսակետին առնչվող մի քանի դիտարկում անենք.

Նախ այդ տեսակետին հարողները հավաստիացնում են, որ հարկադրանքի միջոցները ապօրինի են՝ ըստ «Պետությունների տնտեսական իրավունքների և պարտականությունների մասին» խարտիայի 32-րդ հոդվածի, համաձայն որի՝ «*Ոչ մի պետություն չի կարող օգտագործել կամ խրախուսել տնտեսական, քաղաքական կամ ցանկացած այլ տեսակի հարկադրանքի միջոց՝ մեկ այլ պետությանը իր սեփական ինքնիշխան իրավունքների իրականացմանը ենթարկելուն պարտավորեցնելու նպատակով*» [**24**]: Կարծես թե դա պետության միջամտությունը արգելող ուղղակի նորմ կարող էր լինել, սակայն դա չդարձավ միջազգային ընդհանուր իրավունքի նորմի, թեև զարգացող երկրները փորձեցին այն այդպիսին դարձնել [**13**, էջ 501]: Խարտիան Գլխավոր ասամբլեայի բանաձև է, և թեկուզ այն որոշ չափով լուսաբանում է միջազգային հանրության զգալի մասի սկեպտիկ վերաբերմունքը տնտեսական սանկցիաների նկատմամբ, սակայն անհրաժեշտ է միջազգային աջակցություն, որպեսզի այն որպես արգելք սահմանող ընդհանուր նորմ դիտվի միջազգային իրավունքի տեսանկյունից:

Բացի այդ, այս տեսակետի կողմնակիցները կարծում են, որ բարեկամական հարաբերությունների և պետությունների միջև համագործակցության վերաբերյալ միջազգային կանոնները պետք է կիրառվեն՝ ըստ ՄԱԿ-ի կանոնադրության: Պետությունների պարտականությունների վերաբերյալ Գլխավոր ասամբլեայի բանաձևը, ըստ էության, ՄԱԿ-ի կանոնադրությամբ ամրագրված սկզբունքների մեկնաբանությունն է: Այն արգելում է պետությունների գործերին միջամտելը ոչ միայն ուժի կամ դրա սպառնալիքի կիրառման, այլև քաղաքական և տնտեսական հարկադրանքի համատեքստում:

ՄԱԿ-ի նախկին հատուկ զեկուցող Իդրիս Ջազաիրը իր խոսքում նշել էր. «*Միայն Անվտանգության խորհրդի կողմից թույլատրված բազմակողմանի սանկցիաներին են համապատասխանում ՄԱԿ-ի կանոնադրության ոգուն*» [**17**, էջ 17]:

ԱՄՆ-ի կիրառած առևտրային էմբարգոն Կուբայի դեմ դարձավ կիրառված միակողմանի ամենաաղմկահարույց սանկցիաներից մեկը և հայտնվեց միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Դա հանգեցրեց Գլխավոր ասամբլեայի՝ գերակշիռ մեծամասնությամբ ընդունվող ամենամյա բանաձևերի ընդունմանը՝ 1992 թվականից սկսած՝ կոչ անելով ոչ միայն դադարեցնել էմբարգոն, այլև հաստատել միջազգային իրավունքի տեսանկյունից ապօրինի լինելը: Վերջին բանաձևը ընդունվել է 2022 թ.-ին 185 երկրի կողմ քվեարկությամբ. միայն ԱՄՆ-ն և Իսրայելն են դեմ քվեարկել, իսկ Բրազիլիան և Ուկրաինան ձեռնպահ են մնացել: 2022 թվականի բանաձևում հիշատակված են «ինքնիշխան հավասարության, պետությունների ներքին գործերին միջամտելու անթույլատրելիության» սկզբունքները՝ հիմնավորելու համար հարկադրանքի միջոցների ապօրինությունը [**25**]:

Մեր գնահատմամբ միակողմանի տնտեսական սանկցիաների ապօրինի լինելու վերաբերյալ տեսակետն առավել հիմնավոր է, քանի որ բխում է միջազգային համաձայնագրերից, մասնավորապես՝ Սակագների և առևտրի ընդհանուր համաձայնագրով պետությունների ստանձնած պարտավորությունից, որն արգելում է առևտրի քանակական սահմանափակումները և խտրականությունը (հոդված 9 և 13): 21-րդ հոդվածում ներառված բացառությունը վերաբերում է ՄԱԿ-ի սանկցիաներին, ինչպես նաև այն միջոցներին, որոնք պետք է իրականացվեն ՄԱԿ-ի կանոնադրությանը համապատասխան: Նշվածից կարելի է ենթադրել, որ միայն ՄԱԿ-ը կարող է կիրառել սանկցիաներ, իսկ պետությունները միակողմանի միջոցներ չեն կարող կիրառել:

21-րդ հոդվածում սահմանված մեկ այլ բացառությունը վերաբերում է միջոցներին, որոնք պետությունն անհրաժեշտ է համարում իր անվտանգությունը պաշտպանելու համար. այդ միջոցներն են է զենքի առևտրի և պատերազմի ու այլ ծայրահեղ իրադրություններում առևտրի սահմանափակումները: «Անհրաժեշտության» վերաբերյալ գնահատականը պետք է ստուգվի Առևտրի համաշխարհային կազմակերպության տրիբունալների կողմից: Առևտրի համաշխարհային կազմակերպությունը չի կարող քննարկել միակողմանի սանկցիաների հարցը, քանի որ ԱՄՆ-ն, դեմ քվեարկելով անդամների ընտրությանը, արգելափակել է Առևտրի համաշխարհային կազմակերպության բողոքարկման մարմնի անդամների նշանակումը, ուստի այն չունի քվորում: Ամեն դեպքում դա չի կարող արգելք լինել սանկցիաների անօրինականության վերաբերյալ հետևություններ անելուն: Բացի այդ, եթե միակողմանի տնտեսական սանկցիաները օրինական համարվեին, ինչպես այդ տեսակետի կողմնակիցները համարում են, ապա անհրաժեշտություն չէր լինի դրանց հարցը քննարկելու ռեպրեսալիաների (հակազդման միջոցների) համատեքստում, քանի որ այդ հասկացությունը օգտագործվում է միայն միջազգային ապօրինի վարքագծերի պարագայում՝ որպես այլ պետության արարքին հակազդելու ծայրահեղ միջոց, դրա փոխարեն կօգտագործվեր, օրինակ, ռետորսիա տերմինը, որն օրինականություն է ենթադրում: Սանկցիաների վերաբերյալ գործերը պետք է քննվեն միջազգային դատական մարմինների, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության մարմինների կողմից:

Ամփոփելով վերոնշյալը՝ արձանագրենք, որ միջազգային տնտեսական սանկցիաների կոնվենցիոն հիմքերը և դրանց կիրառման պրակտիկան ժամանակակից միջազգային իրավունքում բազմաշերտ են և հաճախ վիճելի: Չնայած ՄԱԿ-ի և տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների իրավական կարգավորումները և դիրքորոշումները ապահովում են որոշակի լեգիտիմություն, սակայն տնտեսական սանկցիաների գործնական կիրառման ժամանակ հաճախ առաջանում են լուրջ խնդիրներ՝ կապված մարդու իրավունքների խախտման, իրավական կանխատեսելիության բացակայության և միակողմանի սանկցիաների կիրառման ոչ իրավաչափ հետևանքների հետ: Այդ պատճառով հեղինակը գտնում է, որ անհրաժեշտ է մշակել և ընդունել նոր կոնվենցիոն չափանիշներ, որոնք կապահովեն սանկցիաների կիրառման հստակ և անվիճելի իրավականությունը, համաչափությունը և հաշվետվողականության միջազգային իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք լիարժեք կնպաստեն տնտեսական սանկցիաների արդյունավետությանը և թույլ չեն տա միջազգային իրավունքի գործիքից դրանք վերածել զուտ քաղաքական նպատակներ հետապնդող ճնշման միջոցի: Հեղինակի գտնում է, որ նշված խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ՄԱԿ-ի հովանու ներքո մշակել և ընդունել միջազգային իրավական մի փաստաթուղթ, որում կսահմանվեն տնտեսական սանկցիաների թույլատրելիության սահմանները և կիրառման նախադրյալները: Դրանում, inter alia, որպես պարտադիր նախապայման անհրաժեշտ է սահմանել, որ ցանկացած սանկցիայի կիրառման դեպքում պետք է բացառվի մարդու տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքական և մյուս հիմնական իրավունքների խախտումը: Նշված փաստաթուղթը Անվտանգության խորհրդին պետք է լիազորի որոշակի պարբերականությամբ իրականացնել մոնիթորինգ՝ գնահատելու համար, թե արդյոք կիրառվող սանկցիան միջազգային իրավունքի տեսակետից իրավաչափ է թե ոչ, արդյոք սանկցիաների կիրառումը շարունակելը համաչա՞փ է հետապնդվող նպատակի հետ, առկա՞ են արդյոք բնակչությանը հասցվող անհարկի վնասներ և այլն:

Հեղինակը գտնում է, որ եթե ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը մոնիթորինգի արդյունքով պարզի, որ պատժամիջոցն այլևս համաչափ չէ կամ հումանիտար աղետի պատճառ է դարձել, ապա պարտավոր է անհապաղ նիստ գումարել և քվեարկության դնել պատժամիջոցը չեղարկելու կամ մեղմացնելու հարցը: Այսօր ՄԱԿ-ում կան մոնիթորինգ իրականացնող մարմիններ (Պատժամիջոցների կոմիտեներ, Փորձագետների խմբեր), սակայն դրանց կարգավիճակը զուտ օժանդակ է, իսկ եզրակացությունները՝ ոչ պարտադիր: Մինչդեռ Մոնիթորինգի մարմնին պետք է տրվի ինստիտուցիոնալ կարգավիճակ: Վերջինիս եզրակացությունները ԱԽ-ի համար առնվազն իրավական հիմք պետք է լինեն սանկցիան չեղարկելու կամ մեղմացնելու հարցը քվեարկության դնելու համար, և թեև Անվտանգության խորհրդի լիազորություններն այդ ոլորտում բացառիկ են, սակայն Մոնիթորինգի մարմնի եզրակացությունների արդյունքում Անվտանգության խորհուրդը իրավաբանորեն պարտավորված պետք է լինի սեփական որոշումների հիմքում իրավական որոշակի չափանիշներ դնել, այդ թվում՝ հերքել կոնկրետ թվեր ու փաստեր կամ դրանք ճանաչել հիմնավոր: Պետք է իրավաբանորեն բացառել Անվտանգության Խորհրդի անգործությունը այս հարցում:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՄԱԿ-ի կանոնադրություն, ստորագրվել է Սան Ֆրանցիսկոյի կոնֆերանսում 1945 թվականի հունիսի 26-ին, ուժի մեջ է մտել 1945 թվականի հոկտեմբերի 24-ին:
2. Սակագների և առևտրի ընդհանուր համաձայնագիր (GATT), ստորագրվել է Ժնևում 1947 թվականի հոկտեմբերի 30-ին, ուժի մեջ է մտել 1948 թվականի հունվարի 01-ից:
3. Եվրոպական միության մասին պայմանագիր, ստորագրվել է 1992 թվականի փետրվարի 07-ին Մաաստրիխտ քաղաքում, որով ստեղծվել է Եվրոպական միությունը, ուժի մեջ է մտել 1993 թվականի նոյեմբերի 01-ին:
4. Եվրոպական միության գործունեության մասին պայմանագիր (TFEU), սկզբնապես ընդունվել է 1957 թվականի մարտի 25-ին Հռոմ քաղաքում որպես Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին պայմանագիր, ուժի մեջ է մտել 1958 թվականի հունվարի 01-ին:
5. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր (ICESCR), ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 1966 թվականի դեկտեմբերի 16-ին, ուժի մեջ է մտել 1976 թվականի հունվարի 03-ին:
6. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ICCPR), ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 1966 թվականի դեկտեմբերի 16-ին, ուժի մեջ է մտել 1976 թվականի մարտի 23-ին:
7. «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիա (CAT), ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 1984 թվականի դեկտեմբերի 10-ին, ուժի մեջ է մտել 1987 թվականի հունիսի 26-ին:
8. «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» կոնվենցիա, ընդունվել է 1949 թվականի օգոստոսի 12-ին, ուժի մեջ է մտել 1950 թվականի հոկտեմբերի 21-ին:
9. «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» կոնվենցիա, ընդունվել է 1949 թվականի օգոստոսի 12-ին, ուժի մեջ է մտել 1950 թվականի հոկտեմբերի 21-ին:
10. «Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին» կոնվենցիա, ընդունվել է 1949 թվականի օգոստոսի 12-ին, ուժի մեջ է մտել 1950 թվականի հոկտեմբերի 21-ին:
11. «Ծովում զինված ուժերի կազմից վիրավորների, հիվանդների, և նավաբեկյալների վիճակի բարելավման մասին» կոնվենցիա, ընդունվել է 1949 թվականի օգոստոսի 12-ին, ուժի մեջ է մտել 1950 թվականի հոկտեմբերի 21-ին:
12. **Alston P., Goodman R.,** International Human Rights, 3-rd ed., 2013.- Oxford Univeristy Press, p. 1580:
13. **Akande D., Akhavan, P., Bjorge E.,** “Economic Sanctions, International Law, and Crimes Against Humanity: Venezuela's ICC Referral” // American Journal of International Law, 2021, pp. 493-512:
14. **Carter B.,** “Economic Sanctions”, // in Max Planck Encyclopaedia of Public International Law (Rüdiger Wolfrum version), Oxford University Press, 2012, pp. 280-293:
15. **Daniel H. Joyner,** "What if Iran Withdraws from the Nuclear Nonproliferation Treaty? Part I: Can They Do That?" // ESIL Reflections, Vol. 1, Issue 5, 13.12.2012, pp. 1-8:
16. **Happold M. and Eden P.,** Economic Sanctions and International Law, Hart Publishing, 2016, p.304:
17. **Jazairy I.,** Report of the Special Rapporteur on the negative impact of unilateral coercive measures on the enjoyment of human rights, UN Doc.A/HRC/30/45, 2015, p. 18:
18. **Pellet A. and Miron A.,** “Sanctions” in Rüdiger Wolfrum (general ed.), Oxford University Press, 2013, p.22:
19. **Ruys T.,** Sanctions, Retorsions and Countermeasures: Concepts and International Legal Framework // Research Handbook on UN Sanctions and International Law / Ed. Larissa van den Herik. – Cheltenham: Edward Elgar Publishing, 2017, pp. 19-51:
20. **Tladi D.,** ‘’The Duty Not to Intervene in Matters within Domestic Jurisdiction”, in J. Viñuales (ed.), The UN Friendly Relations Declaration at 50: An Assessment of the Fundamental Principles of International Law, Cambridge University Press, 2020, pp.87-104:
21. International Humanitarian Law and the Challenges of Contemporary Armed Conflicts, Report, Document prepared by the International Committee of the Red Cross, Geneva, 2015:
22. United States- Certain Measures on Steel and Alumnium Products (DS554) // el. Resource- https://u.to/zDKsIg (հղումը կարճեցված է: Դիտման ամսաթիվ՝ 29.06.2025):
23. UN Special Rapporteur on the negative impact of unilateral coercive measures on the enjoyment of human rights, 14.05.2021, Ժնև // el. resource- https://u.to/zTKsIg (հղումը կարճեցված է: Դիտման ամսաթիվ՝ 29.06.2025):
24. Resolution adopted by the General Assembly on 12 october 2022, N A/RES/ES-11/4:
25. Resolution adopted by the General Assembly on 03 november 2022, N A/RES/77/7; For the official press release and voting figures, GA/12465:
26. WTO Panel Report, Russia-Measures Concerning Traffic in Transit, WT/DS512/R, 05.04.2019, paras. 7.76-7.104, p. 137:
27. el.resource- https://u.to/yTKsIg (հղումը կարճեցված է: Դիտման ամսաթիվ՝ 13.07.2025):

Сдана / Հանձնվել է՝ 20.09.2026
Рецензирована / Գրախոսվել է՝ 28.09.2026
Принята / Ընդունվել է՝ 05.10.2026